«. . . Le premier fondement était de jaspe; le second, de saphir; le troisième, de chalcédoine; le quatrième, d'émeraude; le cinquième de *sardonix*». — Եբրայականն.

הַיְסוֹד הָרִאשׁוֹן יָשְׁפֵה = եաշփէ

הַשֵּׁנִי סַפִּיר = սափփիր

הַשְּׁלִישִׁי כַּרְכֹּדְנָא = գադգադնա

הָרְבִיעִי בָּרֶקֶת = պարէքէթ

הַחֲמִישִׁי שֹׁהַם = շոհամ.

Ուրեմն յն. լտ. և ատոնց հետեւողութեամբ նաեւ ուրիշ արդի եւրոպական լեզուով Աստուածաշունչ մատեաններու մէջ, մեր եղեգնաքարի հոմանիշ կը գտնենք Սարտոնիքս և ոչ Օնիքս, եթէ եօթանասնիցն Օնիքս գործածած ըլլար, այն ատեն անճիշդ չէր եղեգնաքարը եղընգնաքարի հոմանիշ համարելն։ Ըստ եբրայական բնագրի այս երկու բառերն կրնան հոմանիշ համարուիլ, քանի որ, ինչպէս տեսանք նոյն պարբերութեան մէջ, փոխանակ Սարտոնիքսի կը գործածէ Շոհամ שֹׁהַם, որ կը նշանակէ եղունգն կամ եղնգնաքար. ուստի եթէ Հայկազեան բառարանն հետեւելով եբր. բնագրին եղունգն և եղեգնաքար հոմանիշ համարած է, ամենեւին չէ սխալած։

Յիշեալ Սարտոնիքս σαρδόνυξ բառին, այժմ մեր մատենագրութեանց մէջ չի սեփականուիր եղեգնաքար այլ Սարդոնիքս [Համեմ. Հ. Քաջունի և Նորայր Բիւզ. բառարաններու Sardonix բառն]։ Բայց հետեւողութեամբ նախնեաց լաւագոյն է անոր նաեւ եղեգնաքար ալ սեփականել, որով այս քննադատեալ բառը գրականութեան մէջ թափառականութենէ այլ եւս դադրած կ'ըլլայ։

Շարայարելի Հ. Օ. ԵՐԵՄ.

**ԱՐԱՔՍ**. — ճաշակաւոր և ընտիր գեղեցկատիպ պատկերներով զարդարուած կիսամեայ Ռուսահայ հանդէս, տեղագրական, պատմական, և այլն։

Հասցէ՝ *Rédaction de la Revue* "ARAKS"

ST. PÉTERSBOURG

(*Russie*)

# ԵԴՄՈՆԴՈՅ ԴԷ ԱՄԻՉԻՍ

## ՃԱՌԵՐ

(Տար. տես էջ 156)

## Գ.

## ԱՂՋԻԿՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

(1894)

Մեր մեծապատիւ կրթութեան պաշտօնէին Օգնականը, ուզեց յանձնել ինծի նաև այս տարի պատուաւոր և ցանկալի պաշտօն մը. իրեն անունովը և իրեն ընկերակիցներուն՝ ես պէտք է ուրախակից ըլլամ ձեզի հետ, պէտք է ըսեմ ձեզի թէ որչափ սիրելի է նաև մեզի այս գեղեցիկ օրը, որուն մէջ Տուրին քաղաքը կը տօնէ և կը պատուէ իր ուսումնասէր աղջիկները, և ինչպէս մեր սրտին մէջ կը ցոլանայ աշխոյժ զուարթութիւնը՝ որ կը փայլի ձերիններին մէջ։

Բայց, ձեզի տրուած մրցանակին իրաւցընէ արժանաւոր ըլլալու համար, վայելուչ է որ, բաց ի վարձատրուած ըլլալու ուրախմիտ խրոխտումէն, ուրիշ մտածութիւններու, ուրիշ զգացումներու բանաք դուք ձեր հոգին։ Դուք պարտք մը ունիք կատարելու այսօր, զոր ես ձեզի կ'ակնարկեմ, սիրոյ և երախտագիտութեան պարտք մը, զոր ձեր ընտրեալ իմացականութիւնը և ձեր ազնիւ սիրտը պիտի ըմբռնէ, անտարակոյս, և պիտի կատարէ նոյնհետայն։

Դարձուցէք մտածում մը ձեր այն ընկերներուն, որոնց, ձեզի նման վարձատրուած ըլլալու համար, չպակսեցան բարի կամք և միտք, այլ ժամանակը, կամ օգնութիւնը, կամ բաղդը. բաղդին այն թեթև նպաստը, որ պէ՛տք է, նաև դպրոցական մրցումներու մէջ, ինչպէս ամէն մրցումի, յաղթելու համար. դարձուցէք սիրալիր մտա-

digitised by A.R.A.R.@

ծում մը մրցակիցներուն՝ որոնց գերազանցեցիք, ճանչցէք ձեր սրտին մէջ անոնց արժանիքը. և որպէս զի նախանձ կամ վհատութիւն չի ծնանի մէկուն մէջ, և մասամբ փոխարինելու համար անձնասիրութեան գոհունակութիւնը՝ զոր այսօր չունին, առաջադրեցէք, ոչ միայն չվիրաւորելու զանոնք երբեք հպարտութեան ստուերով մը անգամ, այլ տակէ վերջը վարուելու իրենց հետ աւելի յայտնի յարգանքով և աւելի փափուկ մարդավարութեամբ։

Դարձուցէք երախտագէտ մտածում մը ձեր վարժուհիներուն. ըսէք իրենց որ, ձեզի հետ մէկտեղ, և ձեզմէ աւելի արժանաւորապէս, նաև իրենք այսօր տօնուած են, իրենք՝ որ նուիրեցին կեանքը պաշտօնի մը՝ որ կ'ուզէ այնչափ սրամտութեան և այնչափ քաղցրութեան անդադար գործակցութիւնը, և այնպէս դժուար իշխանութիւն մը իր յատուկ մտքին վրայ, և աշխատանք մը՝ որ շատերուն երիտասարդութիւնը կը կարճեցնէ. իրենք՝ որ կու տան ձեզի զարմանալի օրինակ մը թէ ինչպէս կրնայ կանացի գործը, առանց ելլալու իրեն ազնուութիւնը աճեցընող ստուերէն, բարձրանալ քաղաքային արժանիքի մը վեհ պատուոյն. իրենք՝ որ ընտանիքէն դուրս կը կատարեն պաշտօն մը՝ մայրենի պաշտօնէն ոչ ինչ նուազ սուրբ և բարերար, և կը կատարեն զայն այնպիսի կերպով՝ որ վարժուհիի անունը կ'ընէ, մեր ամէնուս խղճին մէջ, ամէնէն աւելի պատուաւոր և ամէնէն սիրական տիտղոսներէն մէկը՝ որով կրնայ պարծենալ կին մը։

Դարձուցէք ձեր ընտանիքներուն սիրոյ մտածում մը, հօրերուն համար, նեղութիւններուն համար՝ որ արժեցին իրենց ձեր դպրոցը, ձեր պզտիկ վիշտերը և ձեր առողջութեանը վտանգները. և ունենան աւելի ակնածու մտածում մը, ունենան ձեզմէ հպատակութեան և սիրոյ աւելի ջերմ նուէր մը այն ծնողքներն, որոնց՝ երկայն աշխատանքը կամ կարօտութիւնները կամ դժբաղդութիւն մը տուեն, ուրիշ բաներու հետ մէկտեղ, վիշտ մը որ ձեր հասակին մէջ կարելի չէ ըմբռնել ամբողջ. այն է՝ ձեզմէ հեռու ապրիլը, կամ զձեզ՝ ինչպէս փախուստի մը դադարումներուն մէջ՝ ատեն ատեն միայն տեսնելը, չկարենալ գոհացնելը երբեմն ձեր ամէնէն աւելի համեստ փափագները, պարտաւորուած ըլլալու ընդհատել ձեր ուսմունքները, խուզել ձեր զուարճութիւնները, և դնել ձեր ճակատին վրայ իրիկունը, աշխատալից և տխուր օրուընէ մը ետքը, առանց ժպիտի համբոյր մը։

Այս մտածութիւններով հոգւոյն մէջ՝ աւելի հանդարտ կերպով պատրաստ կ'ըլլանք մտիկ ընելու համառօտ խօսքերը, զոր ես ձեզ պիտի ըսեմ, այն սերտ յարաբերութեան վրայօք՝ որ կը կապէ ձեր ներկայ ուսմունքները ձեր ապագայ պարտքերուն հետ։

Եւ թերևս ձեր մէջէն աւելի մեծերուն, որոնց կը դառնամ ես տարանձնակի, արդէն փայլած է, իմ արտաբերելէս առաջ, իմ մտածութիւնս։

Կայ անուն մը, քաղցր ամէն լեզուի մէջ, յարգուած ամէն ժողովուրդներու մէջ, առաջինը որ կը հնչէ՝ խղճին արթննալովը՝ երախային շուրթին վրայ, վերջինը որ կը շշնջէ պատանեկիկը մահուան դիմաց. անուն մը զոր կը կոչեն դեռ հասուն մարդը և ալևորը, տղայոց խանդաղատանքով, կեանքի հանդիսական ժամերուն, նաև շատ տարի վերջը որ ա՛լ երկրիս վրայ չէ զայն կրողը. անուն մը՝ որ կարծես ունի իր մէջը խորհրդաւոր զօրութիւն մը նորէն բարւոյն դարձընելու, մխիթարելու և պաշտպանելու. անուն մը՝ որով կ'ըսուի ինչ որ աւելի քաղցր է, ինչ որ աւելի զօրաւոր, ինչ որ աւելի սուրբ մարդկային հոգւոյն մէջ։

Սահմանուած էք դուք կրելու օր մը այն անունը։ Իսկ արդ, գիտնաբար կատարելու համար բարձր պարտականութիւնները՝ որ այն անունը կը նշանակէ, բաւական չէ բնազդումը, բաւական չէ սիրտը. կարևոր է իմացականութեան և հոգւոյ մշակութիւնը. և ասոր՝ դպրոցի մէջ սորվեցուցածներէն՝ բան մը չկայ որ չնպաստէ։ Մտքերնիդ աղէկ պահեցէք. աւելի հաստատ ստուգութեամբ ուսումնասիրեցէք՝ որ նաև ծանօթութիւնները և գիտութիւնները, որ հիմա կնկան մը համար ձեզի աւելի աւելորդ կ'երևնան,

digitised by A.R.A.R.@

ժամանակ մը՝ իբրև մնացած թողբոջներ՝ անգործ մնացած ըլլալէն ետքը, և գրեթէ անխնամ ձեր հոգւոյն մէջ, օր մը ինքնին նորէն ձեզմով արթնցած սիրտի կենդանանան„ երբոր կրնաք զանոնք գործածել ուրիշներուն օգտին համար, և պիտի բացուին բարիք ընելու իմաստութեան մէջ, պատուի մէջ, իշխանութեան մէջ, զօրութեան մէջ։

Անոր համար կ՚ըսեմ ձեզի.

Եթէ, երբեմն, կը յոգնեցնէ զձեզ և զձեզ սրտաբեկ կ՚ընէ լեզուի մանրամասն և դանդաղ ուսումը, յաղթեցէք դժկամակութեան, մտածելով թէ ո՛րչափ կարևոր է զգացումը և ստացումը ազդու և գեղեցիկ խօսքին, իբր յատուկ սիրտը բանալու և ուրիշին սիրտը շարժելու համար, սորվեցնելու, համոզցնելու, ինքզինքը պաշտպանելու համար. մեր հեռաւոր սիրելիներուն սիրոյ սփոփանքը և խորհուրդի նպաստը ղրկելու համար. արժանապէս ըմբռնելու և զարմանքով նկատելու, ինչպէս ամէն կիրթ քաղաքացիի պարտքն է, գիտութեան և գեղեցկութեան անհուն գանձը՝ զոր հաւաքեցին մեր անմահ գրիչները՝ մտածութեան և փառքի եօթն դարերու մէջ։

Եթէ ձեր միտքը կ՚ապստամբի երբեմն թիւերու ցամաք ուսմունքէն, մտածեցէք թէ ո՛րչափ օգտակար է իմացական գործունէութեան ամէն ձևին մէջ, ոչ այնչափ իր մէջը այն գիտութիւնը՝ որչափ կարգի և ճշդութեան իմաստը որ կը բերէ այն մտքին մէջ, և ատեն ատեն կեանքի վարչութեանը մէջ. մտածեցէք թէ քանի՛ ընտանիքներու մէջ կնկան հաշուարար գրիչն է այն՝ որ կը գծէ ամէնուն ուղիղ ճամբան, այն որ, ամէն օր թուաբանութեան անաչառ փորձով ցուցնելով՝ պզտիկ զոհողութիւններու կարևորութիւնը, կը պատժէ ունայնութիւնը և ծուլութիւնը կը մշտէ, և վիճակէ մը՝ որ անզգոյշ ընտանիքի մը աղքատութիւն էր, հանել կու տայ շատ անգամ համեստ բարեկեցութեան մը, աւելի գոհ, վասն զի աւելի արժանաւոր, ճոխութենէն որ չարժեց ոչ քրտինք և ոչ արցունք։

Եթէ ձեզի տաղտկալի է, երբեմն, և կը յոգնեցնէ զձեզ հեռաւոր դիպուածներու թուականներ և պատմութիւններ յիշողութեան մէջ պահելը, յարատևեցէք ինչ որ ալ ըլլայ, ոչ միայն որ ով որ օտար է պատմութեան՝ մոլորած հոգի մըն է անցեալ մթութեան և ապագայ մթութեան միջև, նման անոր որ կ՚երթայ գիշերը պզտիկ լոյսով մը, չտեսնալով բայց ամենաքիչ միջոցը որուն մէջ քայլը կը շարժէ. ոչ միայն որ վսեմապէս չի կրնար սիրել հայրենիքը ով որ չի ճանչնար անոր փառքերը, զոհողութիւնները և կռիւները, այլ գիտնալու համար թէ կինը ինչ ընդարձակ և դիւցազնական բաժին ունեցած է այն զոհողութիւններուն և կռիւներուն մէջ. և հատուցանելով զարմանքի և երախտագիտութեան հարկը որ, ամէն փրկանուիրուած իտալացի աղջիկ և ամէն ազատ իտալացիներու մայր՝ պարտական է մնացած իտալացի հարսներու, մայրերու, առնուլ իրենց յիշատակին խորին մեծարանացը մէջ եռանդը և զօրութիւնը՝ առաջ տանելու իրենց սուրբ գործը ազատութեան և արդարութեան ճամբուն վրայ։

Եթէ երբեմն երբեմն ձեզի ծանր կու գայ այն երկիրներու ձևերը և սահմանները, և քաղաքներու և լեռներու և գետերու անուններ և նկարագրութիւններ, ձեր մտքին մէջ դրոշմելու աշխատութիւնը, խրախուսուեցէք, մտածելով որ դուք կը գծէք հոն այս կերպով ընդարձակ և լուսաւոր պատկեր մը աշխարհքիս, որուն հազար կէտերուն վրայ պիտի գան հետզհետէ ժողվուելու, հոն մնալու համար հաստատուն և կարգաւորեալ, այն ամէն երկրի և ամէն ժամանակի հազար, ցրուած, զանազան ծանօթութիւնները, որ կեանքի ընթացքին մէջ, չփնտռուած ալ, կը սորվուին, բայց որ առանց այս ուսման հիմանը, կը գլորտըկին խառնակ յիշողութեան մէջ և կը լմննան ցիրուցան ըլլալով, ինչպէս ծիծառներու խուռն երամ մը՝ որոնք չգտնան ճիւղեր և գետինը՝ որուն վրայ կարենան հանգչիլ։

Եւ վերջապէս, ձեր մէջէն անոնք, որոնց ձանձրանալի կու գան աշխատութիւնները որ աւելի սեպհական են իրենց սեռին, անոնք որ իրենց ընկերական վիճակովը զանոնք իրենց անձին անօգուտ կամ անարժան կը

digitised by A.R.A.R.@

համարին, մտածեն թէ չկայ ընկերական վիճակ մը՝ որուն մէջ պատուաւոր ըլլայ կնկան համար տնական աշխատութիւններուն արհամարհանքը. թէ որչափ աւելի բարձր զմեզ բաղդը գրած է, այնչափ աւելի մեր անհրաժեշտ պարտքն է յարգելու խոնարհ և ապերախտ, բայց կարևոր, աշխատութիւնը, որ ուրիշներ մեզի համար կը կատարեն, և պատուելու զայն, երբոր պէտք է, անոր մասնակից ըլլալով. և մտածեն որ բաղդը փոփոխական է, որ ապագան գաղտնիք մըն է, և թէ ամէն օր կը տեսնուին քանի ստիպուած այն աշխատութիւններուն, որոնք ատեն մը բանի տեղ չէին դներ և կը ծաղրէին, ազնուական ձեռքեր, որոնցմէ ձախորդութիւնը, ճիրանի մը յեղակարծ հարուածով, յափշտակեց ձեռնոցները և մարգարիտները։

Սորվեցէք ուրեմն և աշխատեցէք՝ իբրև թէ ամէնքնիդ ալ սահմանուած ըլլայիք ուսուցչութեան, և իրականապէս անոր սահմանուած էք, վասն զի ամէն կին իրեն տանը առաջին և վերջին վարժուհին է. և մի՛ զանց ընէք հրահանգներէն մէկն ալ որ ձեր վրայ դրուած են, վասն զի ամէնքն ալ գործակից կ'ըլլան ձեր միտքը և սիրտը կատարելագործելու՝ ուրիշ մտքեր և ուրիշ սրտեր օր մը կառավարելու համար։ Եւ դուք պէտք է ընէք ասիկայ ինչ որ ալ ըլլայ, եթէ նաև բաղդը, ձեր ամէնէն աւելի յանդուգն փափաքները գերազանցելով, բարձրացնէ ձեր ամէնէն սիրելիները զօրութեան և փառքի. վասն զի — մի՛ մոռնաք այս ճշմարտութիւնս — զօրաւոր և փառացի մարդն ալ, անցած հանրային կեանքի բոլոր մրրիկներէն, փորձ մարդիկներու և վարժ իրենց վրայ իշխելու, և այնչափ հպարտ որ ալ մէկուն չվստահի վիշտ մը, խորհուրդ մըն ալ չհարցնէ, կը վստահի դեռ իրեն վիշտերը, կը հարցնէ դեռ խորհուրդ իրեն մանկութեան քաղցր ընկերուհւոյն, կը փնտռէ միշտ, յաղթանակի կամ դժբաղդութեան ժամուն մէջ, իրեն մօրը խօսքը և փայփայանքը։

Ինչ որ ըսի՝ դպրոցին համար է։ Ընդունեցէք յորդորանք մըն ալ այն ատենուան համար՝ երբոր դպրոցը ալ ձեզի ուրիշ բան չըլլար բայց սիրելի յիշատակ մը։

Խօսքերը՝ որ ձեր ձեռքը եկած գիրքերուն մէջ պիտի լսէք, և նաև՝ բարեսէր մտքով շարժած արդար մարդիկներու խորհրդակցութիւններուն մէջ, պիտի գտնաք դուք աշխարհքի համար հակառակութեան կամ արհամարհանքի զգացմունք մը ներշնչելու ձգտում մը, ձեզի դժուարին ընելու ձեր ամէն խանդին և խանդաղատանքին մղումը, տերևաթափ ընելու ձեր երևակայութենէն այն ամէն բանը՝ որ սովորութիւն է կոչել «կեանքի բանաստեղծութիւն»։ Դէմ կեցէք այս չարաղբեցիկ բերումին։ Որչէն շատ կը զօրանայ մարդիկներու մէջ կեանքի և աշխարհքի տխուր զգացում մը. չի զօրանայ նաև ձեր մէջը, վասն զի կնկան սրբազան պարտքերէն մէկն է՝ անոր դէմ պատերազմիլը, զայն բնաջինջ ընելը ամէն սրտերէ որ իր բոլորտիքը կը բաբախեն։ Այո, աշխարհքս, անօրէնութեամբ, ատելութեամբ, ոճիրներով լեցուն է։ Բայց կայ հոն նաև այնպէս մեծ շեղջակոյտ մը խեղճութիւններու և ցաւերու, որոնց արժանացած չեն և կը կրեն անպարտելի քաջասրտութեամբ. կը կատարուի հոն ամէն օր, աշխատութեան անսահման ձևերու մէջ, այնպէս ընդարձակ և բեղնաւոր կամքի, համբերութեան և հանճարոյ ճիգ մը. կը շարժի հոն մէկ այնպէս տապնապող և անխոնջ փափագ մը բարւոյն. կան հոն այնքան մեծ առաքինութիւններ, այնքան վեհանձն հոգիներ, այնքան ազնուական և բարի կեանքեր։ Ապացոյցը որ ասոնք շատ են և ամէն կողմ՝ է՝ որ երկրիս վրայ մարդ չկայ, որչափ ալ անհաւատ ըլլայ և չար, որ չի հանդիպի, չի ճանչնայ անոնցմէ մէկը իր ճամբուն վրայ։ Եւ կը հանդիպիք դուք ալ, ապահով կեցէք, նաև ձեր մէջէն նուազ բաղդաւորները. պիտի ճանչնաք գործեր և սրտեր որ պատիւ կը բերեն մարդկային ցեղին, և պիտի ունենաք այն աստուածային ժամերէն, որ օրհնել կու տան գոյութիւնը և թողութիւն խնդրել մարդկութենէն զինքը զրպարտած և մերժած ըլլալուն։

Ո՛չ, մի՛ հաւատաք անոր որ կ'ըսէ ձեզի, կեանքի մէջ բանաստեղծութիւն չկայ։ Բանաստեղծութիւն պիտի ըլլայ հոն՝ քանի որ հնչէ որորոցներուն քաղցրին քով մայրական

digitised by A.R.A.R.@

երգը. քանի որ ծերերը պիտի ապրին իրենց մանկութիւնը իրենց որդւոցը որդիքներուն մէջ. քանի որ ըլլան նշանածներ որ, ձեռք տալով, հոգին կու տան, և երիտասարդներ որ մեռնին տղայ մը ազատելու կամ գաղափար մը պաշտպանելու համար։ Բանաստեղծութիւն պիտի ըլլայ հոն՝ քանի որ կան կը տեւեն գթութիւնը, բարութիւնը, երիտասարդութիւնը, աշխատանքը, գիտութեան յաղթութիւնները և արուեստին զարմանալիքը, և քանի որ ծաղկի գարունը և աստղերը փայլփլին մարդիկներու յոյսերուն շուրջը և վրան։

Դարձէք հիմա, նոր եռանդով, ձեր ամէնօրեայ աշխատութեանը, և սովորական աշխատութեան վրայ ուրիշ մըն ալ աւելցուցէք, ամէնէն աւելի օգտակարը. այն է՝ խլել ամէն օր հաստատամտութեամբ և խնամքով, հազիւ թէ ծայր տան, հոգւոյն գէշ խոտերը, պզտի ունայնամտութիւնները, պզտի յամառութիւնները, պզտի ոխերը. դիւրին աշխատութիւն՝ քանի որ փափուկ են խոտերը և ձեռքերը, յետոյ աւելի դժուարին. մաքրեցէք դաշտը սէզերէ, նոր ծլած ճիւղերէ, և մի՛ թողուք հոն՝ բայց գեղեցիկ գաղափարներու ոսկեփունջ հասկերը և ազնուական իղձերու կապոյտ և կարմիր ծաղիկները։ Եւ կատարեցէք տան մէջ այս ժամէս սկսեալ ամենաքաղցր պաշտօնը՝ որ ուրիշներէն աւելի աղջիկներուն կ՚իյնայ. սփոփեցէք յոգնած հայրը, խնդացուցէք տրտում մայրը, խնդրեցէք շնորհք յանցաւոր կրտսեր եղբօր համար, հաշտարար եղէք գժտութիւններու, ծաւալեցէք ձեր ձայնը երաժշտութեան մը պէս ընտանիքին գործունեայ խաղաղութեանը մէջ։ Եւ երբոր ձեր օրը լմննալուն, ամփոփուելով լռութեան մէջ և մտածութեամբ տարիներուն վրայէն անցնելով, երազէք երջանիկ երիտասարդութիւն մը և հանդարտ ծերութիւն մը, խնդրեցէք ձեր աղօթքներուն մէջ, դրէք ձեր ամէն իղձերուն և առաջադրութիւններուն գլուխը այն առաքինութիւնը որ, միայն, կրնայ տալ թէ՛ մէկը և թէ մէկալը, այն որ մեզի ամէնուս աւելի հարկաւոր է, ամէն հասակի մէջ, ինչ վիճակի մէջ որ զմեզ դրած ըլլայ բաղդը, ուրիշներուն բարիքը և մերը ընելու համար, առաքինութիւնը՝ անկեղծութեամբ ընելու և գործադրելու կեանքի ամէն փորձի մէջ՝ այս պարզ խօսքերս, որուն մէջ ամփոփուած է աշխարհքիս բոլոր գիտութիւնը. — Դժբա՞ղդ ես դու. կարեկից կ՚ըլլամ քեզի։ — Տկա՞ր ես դու. կը պաշտպանեմ զքեզ։ — Դու զիս կը նախատե՞ս. ես քեզի կը ներեմ։ — Դու ինծի կը լսե՞ս. և ես զքեզ կը սիրե՛մ։

Եւ կը վերջացնեմ մաղթանքով մը, որովհետև մաղթանքը մանկութեան դիմացը կ՚ելլէ սրտէն ինքնաբերաբար, ինչպէս երգը տրշալուսին առջև։

Անցէք ծաղկաւէտ և ժիր. ձեր կեանքը ըլլայ ծիծաղկոտ, ինչպէս վայելչութեամբ և գոյներով լեցուն տեսարանը զոր կ՚ընծայէք դուք այս տեղ մեր նայուածքին. կարող ըլլաք, շատ տարիներէ ետքը, դառնալ այս թատրոնիս մէջ, տեսնալու համար ձեզի նման բարի և ուսումնասէր ուրիշ աղջիկներու անցնիլը այս բեմէս, և նաև այն ատեն ձեզի հետ ընկերեն ձեր հայրը և մայրը, պահուած երիտասարդ ձեր սիրոյն կրակովը և զձեզ սիրուած և մեծարուած տեսնելու ուրախութեամբը։

Եթէ հաճոյական է ձեզի մաղթանքը, ձեր ալ կողմանէ մաղթեցէք մեզի ամենուս՝ որ նաև այն տարիներուն մէջ ալ կարենանք նորէն զձեզ տեսնալ. և աւելցուցէք, կ՚աղաչեմ, թէ անախորժ պիտի չըլլայ ձեզի լսելը՝ որ նոյն ձայնը կրկնէ նոր գարուն վարձատրուած պզտիկ աղջիկներուն նոյն այն խրատները զոր ձեզի տուաւ։ Ձայնը փոխուած պիտի ըլլայ. բայց ոչ դպրոցի սիրելիր յարգանքը, և ոչ նորաբողբոջ սերունդներուն համար խորին և մտածկոտ սէրը, և ոչ ապագային մէջ շողափայլ հաւատքը, որ այսօր իմ ընկերներուս սրտին թարգման կ՚ընեն զայն, ոչ հեղինակաւոր, բայց հաւատարիմ։ Մաղթանքը փոխարինուած համարելով, ձեզի շնորհակալ կ՚ըլլամ, և կու տամ ձեզի ժամանադրութիւն տարիէ մը։

Բաղդաւոր տարի մը ըլլա՛յ այս ձեզի համար — սիրասուն աղջիկներ — և ձեզի համար — արիասիրտ դաստիարակներ, — ըլլա՛յ երջանիկ տարի մը դպրոցի համար և

digitised by A.R.A.R.@

հայրենեաց համար, ըլլայ աշխատանքի և խաղաղութեան տարի մը ամէնուն համար։

Թրգմ. Հ. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՔԱՍՔԱՆՅԻԼԵԱՆ

Շարայարելի

# ՀՆԱԽՕՍԱԿԱՆ

## ՊԱՏԱՍԽԱՆ ԱՌ ՊԱՏԿԵՐԻՆ

ՊԱՏԿԵՐԻՆ մէջ* կարդացի մեծ. Նազարեթեան Սահակ վարդապետի երկար պատասխանն իմ համառօտ Դիտողութեանց, զոր կատարեր էի Բազմավէպի մէջ՝ իւր մի հնախօսական հատուածին վերայ, հրատարակուած Նախայիշեալ հանդէսին մէջ։ Նա սաստիկ վրդովեր է իւր հատուածին քննադատուած լինելոյն համար, համարելով զայն ինձ «չափազանց անձին վասն գիտութեան չարաչար արդիւնք», ըստ որում յանդգնած եմ կարողութենէս վեր ձկտիլ՝ չհասանելու իւր կարծեաց։ Արդարեւ աններելի յաւակնութիւն կը լինէր իմ կողմանէ՝ այնպիսի խնդրոց մէջ հմտութեամբ փորձիլ համեմատել զիս իւր հետ, որ մի գիրք հրատարակած է։ Սակայն մարդկային ծանօթութեանց մէջ բացարձակ կատարելութիւն, և գոնէ «ինչ ինչ կէտերու» մէջ անգամ, — որպիսիք էին իմ Դիտողութեանց նիւթ, — թերութեանց բացակայութիւնը՝ հողածնացս սահմանէն դուրս կը կարծեմ չափաւոր խելօքս։ Իսկ եթէ անվրէպ կը պահանջուի յինէն ընդունել մի այդպիսի գերբնական միայն գոյութիւնը, խընդրելով առ այժմ ժամանակ խորհելու և ընտրելու, առաջիկայիւս կը ձեռնարկեմ անգամ մ'այլ, և վերջին անգամ, կրկնել և հաստատել իմ նախորդ դիտողութիւնքը։

* 1899, թիւ 19, 20, 21, 22։

*
* *

Անդրանիկ քրիստոնէից կիւրակէի հաւաքմունքը պատարագի և աղօթից համար լինելն ընդունած և հաստատած էի յընդհանուրս։ Սակայն յետ յարութեան Փրկչին՝ աւետարանաց մէջ յիշուած քանի մի ժողովմանց մէջ անվրէպ պատարագ մատուցուած լինելու մասին տարակարծ էի արգոյ հատուածագրին։ Նա կը պնդէ վերստին՝ թէ ամենայն հաւաքմունք առաքելոց կիւրակէ օր եղան. թէ եղան պատարագի համար. թէ քանիցս անգամ որ երեւեցաւ Յիսուս նոցա ժողովոց մէջ, (և ամենին մէջ երեւեցաւ), ս. խորհրդով հաղորդեցաւ նոցա հետ. իսկ սոսկ նիւթական կերակրով ոչ բնաւ։

Առ այս իւր նոր ցուցմունքն համոզիչ չեն որչափ ինք կը կարծէ։ Խնդիրը լաւ պարզելու համար անգամ մի թուեմք Յիսուսի բոլոր յայտնութիւնքը զոր կը յիշեն ս. գիրք։

Ա. Յարութեան առաւօտը, Մագդաղենացւոյն, գերեզմանին մօտ։ Յովհ. Ի, 14–7։ — Ըստ Մատթ. ԻԸ, 5–10, նախ հրեշտակն կ'երեւի իւղաբերից, և ապա Յիսուս եւս. բայց Յիսուսի երեւումն՝ ի Մատթ. ընդհանուր և անորոշ, Յովհաննէս կ'առանձնացնէ Մարեմայ. զվերջինս կը հաստատեն լռելեայն նա և Մրկ. ԺԶ, 1–8 և Ղկ. ԻԴ, 1–10, պատմելով հրեշտակին երեւումն կանանց, և զՅիսուսին ոչ, որ աւելի եւս արժանի էր յիշելոյ։

Բ. Յարութեան օրը, Պետրոսի, տեղին անյայտ։ Ղկ. ԻԴ, 34. Պաւղ. յԱ Կոր. ԺԵ, 5։

Գ. Յարութեան օրը, երկուց յաշակերտաց, յԷմմաւուս։ Ղկ. ԻԴ, 13–31։

Դ. Յարութեան աւուր երեկոյին, մետասանից և նոցա հետ եղելոց, ի տան։ Ղկ. ԻԴ, 33–45. ՅՀ. Ի, 19–23. Ա Կոր. ԺԵ, 5։

Ե. Յարութեան ութերորդ օրը, աշակերտացն, ի նմին տան։ ՅՀ. Ի, 26–31։

Զ. Յայլ աւուր, եօթն հոգւոյ, յեզր Տիբերիայ։ ՅՀ. ԻԱ, 1–22։

Է. Յայլ աւուր, աւելի քան հինգհարիւր եղբարց միանգամայն, տեղին անյայտ։ Ա Կոր. ԺԵ, 6։ — Զայս երեւումն բազմութեան՝ յետագայեցի քան զնախորդն, զի զայն Յովհաննէս երրորդ կը դնէ ըստ բազմութեան աշակերտաց, որով աս չորրորդ կը լինի։

digitised by A.R.A.R.@